ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Ռ. Գրանջումյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզի Հրազդանի

Թիվ 7 միջնակարգ դպրոց, 5-6րդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Ալեքսանյան Ալվարդ Բախշիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022-2023» ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)** 5-րդ դ*ասարանը բաղկացած է վեց աշակերտից: Տղաներ՝ երկու, աղջիկներ՝ չորս: 6- րդ դասարանը բաղկացած է մեկ տղա աշակերտից: Աշակերտների միջեւ կայուն ներդասարանական փոխհարբերություններ են, նրանք հնարավորինս քիչ են բացակայում դասերից:*

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում Ուսումնա-դաստիարակչական նպատակով դասղեկը նախապատրաստում և կազմակերպում է դասարանի կոլեկտիվի մասնակցությունը դպրոցական գործընթացներին: Կազմակերպում է դասարանի հերթապահությունը դպրոցում: Հետևում է դասագրքերի պահպանմանը: Վարում է ծնողական ժողովներ: Կազմակերպում է դասագրքերի հանձնումը գրադարան, դասարանի սանիտարական աշխատանքները: Տարվա ընթացքում, ծնողների և աշակերտների հետ համատեղ, կազմակերպում է ավարտական միջոցառումների նախապատրաստական աշխատանքները:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն** *Ծանոթացնել երեխաներին իրենց հոգեւոր արժեքներին եւ պատմությանը : Զրույցների եւ քննարկումների միջոցով բացատրել քրիստոնեությունը խարխլող աղանդների վտանգավորությունը: Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մեջ սերմանել խղճի, ազնվության եւ բարության կարեւորությունը եւ հավատը Աստծու նկատմամբ:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն *Աշակերտներին ծանոթացնել անվանի նկարիչների, քանդակագործների եւ երաժիշտների աշխատանքին նկարների եւ ֆիլմերի միջոցով : Նրանց մեջ սերմանել գեղագիտական ճաշակ եւ սեր գեղեցիկի նկատմամբ: Ներկայացնել բնության պահպանման եւ բարելավման կարեւորությունը:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Կատարել պատմական ակնարկներ՝ աշակերտներին հիշեցնելով հայրենիքի դժվարին եւ քարքարոտ անցյալի եւ երկար սպասված ազատության եւ անկախության ձեռք բերման մասին: Աշակերտներին ծանոթացնել ազգային եւ արցախյան հերոսների կենսագրությանը, նրանց կատարած հերոսական գործունեությանը: Բացատրել աշակերտներին հայ լինելու եւ հայեցի մտածելու կարեւորության մասին:*

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Կազմակերպել « *Առողջ մարմնում առողջ հոգի» վերնագրով զրույց- քննարկում: Աշակերտների մեջ սերմանել հետաքրքրություն սպորտի եւ առողջ ապրելակերպի նկատմամբ: Բացատրել, թե ինչքան վտանգավոր են վատ սովորությունները եւ խորհուրդներով հեռու պահել նրանց դրանցից:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն *Բացատրել աշակերտներին աշխատելու կարեւորությունը: Նրանց մեջ սերմանել սեր դեպի աշխատանքը: Բացատրել աշակերտներին, որ ցանկացած աշխատանքի «պտուղները» պետք է քաղել հասունանալուց հետո:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն *կազմակերպել զրույց- քննարկում «Հայաստանում հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը» թեմայով, որտեղ խոսվելու է արգելոցների, ազգային պարկերի, բնության ազգային հուշարձանների, արգելավայրերի մասին:*

4. Դպրոց-ընտանիք կապը *Աշակերտների մեջ սերմանել պատասխանատվություն եւ սրտացավություն դպրոցի նկատմամբ, հիշեցնել, որ դպրոցը մեր երկրորդ տունն է: Կազմակերպել ժողովներ ծնողների եւ աշակերտների մասնակցությամբ՝ ներկայացնելով դպրոցի եւ մանկավարժների գործունեությունը եւ արդյունքները:*

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
1	*«Նորամուտը որպես տոն աշակերտների համար» թեմայով զրույց:*	7 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
2	*«Իմ տունը» թեմայով զրույց*	14 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
3	*«Հայաստանի զինանշանի եւ դրոշի պատմությունը» թեմայով զրույց*	28 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
4	*«Շնորհավոր տոնդ, ուսուցի՛չ» վերնագրով զրույց:*	5 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
5	*«Ո՞վ է իմ ընկերը» թեմայի քննարկում*	12 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
6	*«Ճանապարհային երթեւեկության կանոններ» թեմայով դաս-քննարկում*	19 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
7	*«Մարդիկ, որոնց մենք հանդիպում ենք ամեն օր» թեմայով քննարկում*	2 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
8	*«Ի՞նչ է ազնվությունը» թեմայով զրույց*	9 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
9	*«Ժպիտը մարդու կյանքում» խորագրով զրույց*	16 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
10	*«Մեր երկրի օրհներգի ստեղծման պատմությունը» պատմական ակնարկ*	23 Նոյեմբեր	աշակերտ դասղեկ
11	*«Վնասակար սովորություններ՝ թմրամիջոցներ» ուսուցողական զրույց*	30 Նոյեմբեր	աշակերտ դասղեկ
12	*«1988 թ. երկրաշարժ: Ինչպե՞ս պաշտպանվել աղետի ժամանակ» պատմական ակնարկ, ուսուցանող զրույց*	7 Դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
13	*«Համակարգիչ. օգուտն ու վնասը» թեմայով զրույց*	14 դեկտեմբեր	աշակերտ դասղեկ

14	*«Սովորենք հասկանալ մեզ շրջապատող մարդկանց» թեմայով զրույց*	21 դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
15	*«Ո՞րն է իմ երազած մասնագիտությունը» թեմայով զրույց*	11 հունվար	աշակերտ դասղեկ
16	*« Երկրագունդը մեր տունն է, ինչպե՞ս չվնասել բնությանը» թեմայով բանավեճ*	18 հունվար	աշակերտ դասղեկ
17	*«Հայրենասիրությունը եւ Հայոց բանակը» թեմայով պատմական ակնարկ:*	25 հունվար	աշակերտ դասղեկ
18	*«Սպորտով զբաղվել՝ այն է առողջ եւ ուրախ լինել» թեմայով զրույց*	1 փետրվար	աշակերտ դասղեկ
19	*«Անտարբերությունն ու հոգատարությունը, տարբերակենք լավն ու վատը» խորագրով բանավեճ*	8 փետրվար	աշակերտ դասղեկ
20	*«Քրիստոնեություն եւ հեթանոսություն, Տյառնընդառաջ տոնի նշանակությունը»*	15 փետրվար	աշակերտ դասղեկ
21	*«Առողջ սնունդ, ռեժիմ եւ առողջություն» թեմայով զրույց:*	22 Փետրվար	աշակերտ դասղեկ
22	*«Օգնել նրան, ով քո կարիքն ունի» թեմայով զրույց:*	1 մարտ	աշակերտ դասղեկ
23	*«Մարտի 8՝ մայրիկիս տոնը» թեմայով զրույց:*	15 մարտ	աշակերտ դասղեկ
24	*«Գարնան հրաշքները, բնության վերածնունդ» թեմայով զրույց*	22 մարտ	աշակերտ դասղեկ
25	*«Նայի՛ր շուրջդ, դու մենակ չես » թեմայով զրույց*	5 ապրիլ	աշակերտ դասղեկ
26	*Կանաչապատում՝ «Օգնենք բնությանը» խորագրով զրույց:*	12 ապրիլ	աշակերտ դասղեկ
27	*«Իմ սիրելի գրքի հերոսները» թեմայով զրույց*	19 ապրիլ	աշակերտ դասղեկ
28	*«Ապրիլի 24» թեմայով պատմական ակնարկ:*	26 ապրիլ	աշակերտ դասղեկ
29	*«Մայիսի 1» տոնի նշանակությունը:*	3 մայիս	աշակերտ դասղեկ
30	*«Կոնֆլիկտների լուծման խաղաղ ճանապարհները» թեմայով բանավեճ*	10 մայիս	աշակերտ դասղեկ
31	*«Հայ հերոսները՝ իմ հերոսները» թեմայով զրույց*	17 մայիս	աշակերտ դասղեկ
32	*«Ամա՛ռ է» թեմայով զրույց:*	24 մայիս	աշակերտ դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
	Էքսկուրսիա բուսաբանական այգի	
	Հետաքրքրաշարժ վիկտորինա	
	Դասախոսություն երկրաշարժի և այլ բնական աղետների վերաբերյալ:	
	Մասնակցել տարեմուտի միջոցառմանը:	
	Զրույց գեղեցկության և մայրության վերաբերյալ:	
	Հայոց Եղեռնին նվիրված դասախոսություն:	
	Կազմակերպել եւ իրականացնել ծառատունկ	